ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՀԵՏԱԴԱՐՁ ՈՒԺԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀՀ ԵՎ ՌԴ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ

Արամ Այվազյան
Հայ - ռուսական (Սլավոնական) համալսարանի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ

Կատարված հանցագործությանն ըստ արարքը կատարելու պահին գործող օրենքի գնահատական տալը ժամանակակից քաղաքակիրթ պետությունների քրեական իրավունքում հաստատված սկզբունք է: Քրեական օրենքի հետադարձ ուժին անդրադարձ է արվում մի շարք միջազգային ակտերով: «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 7-րդ հոդվածն ամրագրում է. «Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն հանցագործություն չի համարվել»[1]:

ՀՀ նոր քրեական օրենսգրքի հայեցակարգի նախագծի 1.3 կետում նշվում է, որ քրեական օրենսգրքի գործողության ժամանակահատվածում մոտ 100 փոփոխություն ու լրացում է կատարվել[2]:

Դիտարկենք, թե ինչպիսի մոտեցումներ և մեկնաբանություններ կան ռուսական իրավաբանական գրականության մեջ խնդրո առարկայի վերաբերյալ: Ռուսաստանի օրենսդրությունում ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության մոտեցումները բազմիցս փոփոխվել են:

Անցյալ դարի սկզբում պրոֆեսոր Ն. Ս. Տագանցևը գրում էր, որ քր. օր.-ի հետադարձ ուժի վերաբերյալ բոլոր կարևոր տեսությունները կարող են համադրվել հետևյալ խմբերում.

«1. Հանցավոր արարքի նկատմամբ կարող է կիրառվել միայն այն օրենքը, որը գործել է դրա կատարման պահին:

2. Հանցավոր արարքի նկատմամբ կարող է կիրառվել միայն այն օրենքը, որը գործել է դրա կատարման պահին, բայց առավել մեղմ կամ հանցավորի վիճակը բարելավող օրենքները միշտ ստանում են հետադարձ ուժ:

Ընդ որում, առավել մեղմ են համարվում՝

ա) արարքի հանցավորությունը վերացնող,

բ) պատժի տեսակը վերացնող կամ ավելի մեղմ պատժի տեսակով փոխարինող,

գ) առանց պատժի տեսակը փոխելու պատժաչափը փոքրացնող օրենքները:

3. Միշտ կիրառվում է նոր օրենքը, բայց անձի վիճակը վատթարացնող նոր օրենքը չի տարածվում նախկինում կատարված արարքների վրա:

4. Նոր օրենքը կիրառվում է բոլոր արարքների նկատմամբ, որոնք մինչև օրենքի հրապարակվելը համարվում էին հանցագործություն, սակայն պատժի ենթակա են դրա հրապարակումից հետո»[3]:

---

[1] Տե՛ս «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիա 1950 թ. 7-րդ հոդված:

[2] http://www.moj.am/legal/view/article/703:

[3] Տե՛ս **Н. С. Таганцев**, Русское уголовное право. Общая часть. Лекции. Том 1, 1994 թ.:

Նախկինում խախտվում էին ժամանակի ընթացքում քր. օր.-ի գործողության համընդհանուր սկզբունքները: Դա բերում էր նրան, որ երբեմն այս կամ այն արարքը համարվում էր ծանր հանցագործություն և դեռ դրանց հետադարձ ուժ էր տրվում: Հայտնի են նաև պատասխանատվությունը մեղմացնող օրենքին պարտադիր հետադարձ ուժ տալու կանոնի խախտումներ: Բերենք օրինակ:

Խորհրդային Ռուսաստանի քր. օր.-ը 1961թ. վերացրեց 60-ից ավելի արարքների հանցավորությունը, որոնք մինչ այդ նախկին օրենսդրությամբ հանցագործություն էին համարվում: Նրանք, ովքեր կատարել էին այդ հանցագործությունները, ազատվեցին քրեական պատասխանատվությունից և պատժից: Միևնույն ժամանակ Խորհրդային Ռուսաստանում ընդունվեց իրավական ակտ՝ «քրեական օրենսգիրքը և քրեական դատավարության օրենսգիրքը գործողության մեջ դնելու կարգի մասին» (1961թ. հունվարի 20), որով պատժի մեղմացման ընդհանուր կանոնում կատարվեց բացառություն, ըստ որի՝ պատժի մեղմացման վերաբերյալ նորմերը չեն տարածվում այն անձանց նկատմամբ, ովքեր դատապարտվել են առանձնապես վտանգավոր պետական հանցագործությունների համար (ինչպես նաև՝ բանդիտիզմ, դիտավորյալ սպանություն և մի շարք այլ հանցագործություններ), և դատավճիռն ուժի մեջ է մտել մինչև 1961թ. հունվարի 1-ը, այսինքն՝ մինչև 1961թ. քրեական օրենսգրքի գործողության սկսելը:

Ներկայումս նման իրավիճակը կարգավորված է անգամ ՌԴ սահմանադրական նորմերով, որոնց բովանդակությունը լիարժեքորեն համապատասխանում է միջազգային իրավունքի նորմերին. «Ոչ ոք չի կարող մեղավոր ճանաչվել ինչ-որ քրեական հանցագործության համար՝ ինչ-որ արարքի կամ թողտվության հետ կապված, որը, համաձայն դրա կատարման պահին գործող ներպետական օրենսդրության կամ միջազգային իրավունքի նորմերի, չի համարվել քրեական հանցագործություն.... Եթե հանցագործություն կատարելուց հետո օրենքով հաստատվում է առավել մեղմ պատիժ, ապա օրենքի գործողությունը տարածվում է այդ հանցագործի նկատմամբ»[1]:

ՌԴ 1996 թ. քր. օր. նորմերը ամբողջությամբ կարելի է դասակարգել (ըստ ժամանակի ընթացքում նրանց գործողության) 3 խմբի.

Առաջին խմբին վերաբերում են անմիջականորեն կիրառման ենթակա նորմերը, որոնք քրեական գործով դատավճռի հրապարակման պահին համարվում են գործող և այդ իսկ պատճառով կիրառվում են: Դրանց շարքին կարող է դասվել ՌԴ քր. օր.-ի ցանկացած նորմ, պայմանով, եթե այդ նորմը գործել է հանցագործության կատարման և դատաքննության ժամանակ:

Երկրորդ խմբին վերաբերում են այն նորմերը, որոնց հետադարձ ուժ չի կարող տրվել: Դրանք այն նորմորն են, որոնք հաստատում են արարքի հանցավորությունը, խստացնում են պատիժը կամ այլ կերպ վատթարացնում են հանցանք կատարած անձի վիճակը:

Երրորդ խմբին վերաբերում են այն նորմերը, որոնց տրվում է հետադարձ ուժ, այսինքն՝ արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող նորմերը:

Օրենքը կարող է հետադարձ ուժ ստանալ օրենսդրի ուղղակի կարգադրությամբ, որը կարող է արտահայտված լինել հենց օրենքում կամ այն գործողության մեջ դնելու մասին հատուկ ակտում, ինչպես օրինակ 1981 թ. մայիսի 8-ի «Կաշառակերության մասին դեկրետում»[2]: Վերջինիս 6-րդ հոդվածում ամրագրված է, որ «Ներկայիս

[1] Տե՛ս «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային պակտ», 1-ին մաս, 15-րդ հոդված, 1966 դեկտեմբերի 19 (Պակտի տեքստը հրապարակվել է «Ռուսական թերթի գրապահոցում»՝ 1999 N 22-23 թողարկումով):

[2] Տե՛ս «Կաշառակերության մասին դեկրետ», 1981թ.:

դեկրետը հետադարձ ուժ ունի նրանով, որ կաշառք տալու համար, որը տեղի է ունեցել մինչև սույն դեկրետը հրապարակվելը, հետապնդումից ազատվում են այն անձինք, ովքեր այս դեկրետի հրապարակումից հետո երեք ամսվա ընթացքում կհայտնեն դատական իշխանություններին իրենց կողմից կաշառք տալու մասին»:

Օրենքի հետադարձ ուժը նշվում է նաև անուղղակի ձևով (առանց դրա վերաբերյալ հատուկ նշում կատարելով), երբ հետադարձ ուժը բխում է իրավական ակտի իմաստից, ինչպես, օրինակ, 1926 թ. քրեական օրենսգրքի 58-րդ հոդվածի բովանդակությունից, որը պատասխանատվություն էր նախատեսում «Քաղաքացիական պատերազմի ընթացքում բանվոր դասակարգի և հեղափոխական շարժման դեմ ակտիվ գործողության կամ ակտիվ պայքարի համար՝ ցարական կարգերում կամ հակահեղափոխական կառավարություններում պատասխանատու կամ գաղտնի պաշտոններ զբաղեցնելով»:

ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածը սահմանում է.

«…Արգելվում է նշանակել ավելի ծանր պատիժ, քան կարող էր կիրառվել հանցագործության կատարման պահին գործող օրենքով:

Մարդուն չի կարելի հանցագործության համար մեղավոր ճանաչել, եթե արարքի կատարման պահին գործող օրենքով այն հանցագործություն չի համարվել:

Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ:

Պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող օրենքը հետադարձ ուժ չունի…»:

Հետևելով սահմանդրական վերոհիշյալ նորմերին՝ ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ քր. օր.) 12-րդ հոդվածն ամրագրում է. «Արարքի հանցավորությունն ու պատժելիությունը որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով: Հանցանքը կատարելու ժամանակ է համարվում հանրության համար վտանգավոր գործողությունը (անգործությունը) իրականացնելու ժամանակը՝ անկախ հետևանքները վրա հասնելու պահից:»: Այսինքն՝ անձը չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության, եթե արարքը կատարելու ժամանակ գործող օրենքով այն հանցագործություն չի համարվել: Այս կարգը համապատասխանում է ժողովրդավարության և մարդասիրության սկզբունքներին: Միաժամանակ քր. օր.-ի 13-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է. «Արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն»: ՀՀ քր. օր.-ի վերոշարադրյալ դրույթի վերլուծությունից երևում է, որ օրենքի հետադարձության կանոնը կիրառվում է այն դեպքում, երբ անձի կողմից հանցավոր արարքը կատարվել է նախքան արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքի ուժի մեջ մտնելը[1]: Կարծում ենք, որ արդարացի և հիմնավորված է այն մոտեցումը, որ հետադարձ ուժ պետք է տալ միջանկյալ քրեական օրենքին: Խոսքն այն իրավիճակների մասին է, երբ արարքի կատարման պահին գործել է մի օրենք, դրանից հետո ընդունվել է անձի վիճակը բարելավող օրենք, որից հետո ընդունվել է երրորդ օրենքը, որը վատթարացրել է անձի վիճակը, և անձի հանցանքը բացահայտվել է

[1] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 5-ի որոշումը ԼԴ/0286/01/09 գործի վերաբերյալ, 14-րդ կետ:

հենց երրորդ օրենքի գործողության ժամանակ: Տվյալ դեպքում անձի նկատմամբ պետք է կիրառվի միջանկյալ, անձի վիճակը բարելավող օրենքը:

Քր. օր.-ի 13-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ «Արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի: Պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող և միաժամանակ պատասխանատվությունը մասնակիորեն խստացնող օրենքը հետադարձ ուժ ունի միայն այն մասով, որը մեղմացնում է պատասխանատվությունը»:

Նմանատիպ մոտեցում է ցուցաբերված մասնավորապես նաև Ռուսաստանի Դաշնության սահմանադրական և քրեական նորմերում: ՌԴ սահմանադրությունն այս կարգն ամրագրում է հետևյալ կերպ. «Ոչ ոք չի կարող պատասխանատվության ենթարկվել այն արարքի համար, որը կատարման պահին չի ճանաչվել որպես իրավախախտում» (հոդված 54, մաս 2-րդ): ՌԴ քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասում նշվում է. «Արարքի հանցավորությունն ու պաժելությունը որոշվում են այդ արարքի կատարման ժամանակ գործող օրենքով»:

Հետադարձ ուժ կամ ռետրոակտիվություն ասելով հասկացվում է նոր քրեական օրենքի գործողության տարածումը (ներգործությունը) այն հանցագործությունների վրա, որոնք կատարվել են մինչև դրա ուժի մեջ մտնելը, այսինքն՝ հին օրենքի գործողության ժամանակ: Փաստորեն, սա բացառություն է քրեական օրենքի գործողության ընդհանուր կանոնից (արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են արարքը կատարելու ժամանակ գործող օրենքով):

Մեղմացնող օրենքը տարածվում է այն անձանց վրա, ովքեր հանցանքը կատարել են մինչև տվյալ օրենքը ուժի մեջ մտնելը, և ովքեր՝

ա) դեռևս չեն բռնվել և պատասխանատվության չեն կանչվել.

բ) բռնվել են, սակայն գործը քննության ընթացքում է.

գ) ովքեր արդեն կրում են պատիժը կամ կրել են, բայց ունեն դատվածություն:

ՀՀ գործող քրեական օրենսգրքը պարունակում է կարևոր դրույթ, ինչը բացակայում էր նախորդ օրենսգրքում, որի համաձայն՝ հետադարձ ուժ է տրվում հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքին: Ո՞ր օրենքն է համարվում հանցանք կատարած անձի վիճակը բարելավող. այն, որը չի վերացնում արարքի հանցավորությունը, չի մեղմացնում պատիժը, սակայն քրեական պատասխանատվության և պատժի նշանակման, քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու կարգի ու պայմանների հետ կապված՝ առավել նպաստավոր պայմաններ է ստեղծում հանցանք կատարած անձի համար[1]: Նման իրավիճակները տարբեր են և կարող են վերաբերել քրեական իրավունքի ընդհանուր մասի տարբեր ինստիտուտներին, որոնցում կատարված փոփոխությունները հանցավորի համար առավել նպաստավոր են: Մասնավորապես, կարող են վերաբերել քրեական պատժի կրման կարգին, պատժից պայմանականորեն վաղաժամկետ ազատելուն, վաղեմության ժամկետներին և այլն: Օրինակ, եթե նոր օրենքը քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ավելի կարճ ժամկետ է նախատեսում, ապա այդ օրենքը պետք է համարել հանցանք կատարած անձի վիճակը բարելավող և դրան հետադարձ ուժ տալ:

Տարբերվում են օրենքի հետադարձ ուժի երկու տարատեսակներ. *հասարակ և վերստուգիչ*[2]: Հասարակ հետադարձ ուժը նոր, ավելի մեղմ քրեական օրենքի տա-

---

[1] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 18-ի որոշումը ԵԷԴ/0008/15/13 գործի վերաբերյալ, 19-րդ կետ:

[2] Տե՛ս «Уголовное прабо», Общая часть, М., 1999 թ. էջ 127:

րածումն է այն հանցագործությունների վրա, որոնցով դատավճիռը դեռևս չի մտել օրինական ուժի մեջ: Եթե այդ ընթացքում արարքն ապաքրեականացվում է, ապա հարուցված քրեական գործերը ենթակա են կարճման: Եթե մեղմացվում է պատիժը (այլ կերպ՝ բարելավվում է հանցանք կատարած անձի վիճակը), ապա նախաքննության մարմինները և դատարանը կատարվածին իրավաբանական գնահատական են տալիս նոր, ավելի մարդասիրական օրենքին համապատասխան: Այսպիսով, և՛ մեղադրանք առաջադրելը, և՛ դատարանի դատավճիռը կայացնելը, և՛ պատիժ նշանակելը իրականացվում են նոր քրեական օրենքին համապատասխան:

Վերստուգիչ (ռևիզիոն) հետադարձ ուժը նոր՝ ավելի մեղմ քրեական օրենքի գործողության տարածումն է այն հանցագործությունների նկատմամբ, որոնցով դատավճիռն արդեն մտել է օրինական ուժի մեջ: Ավելին, տվյալ դատավճիռն արդեն կարող է ի կատար ածված լինել, և անձը կրելիս կամ կրած լինի պատիժը, բայց ունենա չմարված կամ չհանված դատվածություն: Այս դեպքում քրեական գործերը ենթակա են վերանայման, իսկ կայացված դատավճիռները՝ «վերստուգման», «վերաքննման»: Արարքի հանցավորությունը և պատժելիությունը վերացնող նոր օրենքն ուժի մեջ մտնելիս պատիժը կրող անձինք ազատվում են դրանից և դատվածություն չունեցողներ են համարվում այդ օրենքը ուժի մեջ մտնելու պահից: Եթե նոր օրենքը մեղմացնում է պատիժը, ապա այն պետք է կրճատվի պատիժը կրող անձանց նկատմամբ՝ այն շրջանակներում, որոնք սահմանված են տվյալ օրենքով:

ՀՀ վճռաբեկ դատարանը միևնույն ժամանակ արձանագրում է, որ ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության ընդհանուր կանոնն ունի նաև բացառություն: Քրեական օրենքը հետադարձ ուժ է ստանում, այսինքն՝ դրա գործողությունը տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց վրա հետևյալ դեպքերում.

1. նոր օրենքը վերացնում է արարքի հանցավորությունը (ապաքրեականացում),
2. նոր օրենքը մեղմացնում է պատիժը,
3. նոր օրենքն այլ կերպ բարելավում է հանցանք կատարած անձի վիճակը:

Ինչպես երևում է վերոգրյալից, քրեական օրենքին հետադարձ ուժ տալու պայմանները սպառիչ են և ունեն իմպերատիվ բնույթ, այսինքն՝ եթե նոր ընդունված օրենքը պարունակում է վերը նշված պայմաններից առնվազն մեկը, ապա իրավակիրառող մարմինը պարտավոր է դրա գործողությունը տարածել մինչև օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են այն, սակայն ունեն դատվածություն:

Այն դեպքերում, երբ նոր ընդունված օրենքը միաժամանակ բովանդակում է պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող և պատասխանատվությունը մասնակիորեն խստացնող դրույթներ, ապա օրենքը հետադարձ ուժ է ստանում միայն մեղմացման առումով[1]:

Քր. օր.-ի 13-րդ հոդվածի 2-րդ մասում ձևակերպված է միջազգային իրավունքի սկզբունքներից և նորմերից, ինչպես նաև ՀՀ Սահմանադրությունից բխող մի կարևոր դրույթ. «Արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի»:

Սա նշանակում է, որ արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը չի

[1] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի որոշումը ԳԴ1/0013/01/11 գործի վերաբերյալ, 17-րդ կետ:

կարող կիրառվել այն հանցագործությունների կապակցությամբ, որոնք կատարվել են մինչև այդ օրենքը ուժի մեջ մտնելը: ՀՀ քրեական օրենսգիրքը քրեականացրել է ոչ միայն առանձին, մինչև այդ հանցանք չհամարվող արարքներ, այլև հանցակազմ պարունակող ամբողջ գլուխներ, օրինակ՝ «Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններ» (գլուխ 22), «Համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ» (գլուխ 24) և այլն: Այդպիսի արարքների մասին օրենքները հետադարձ ուժ ունենալ չեն կարող: ՀՀ քր. օր.-ի 13-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքն այն է, որը քրեական պատասխանատվության և պատժի նշանակման, քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու կարգի ու պայմանների հետ կապված ոչ նպաստավոր պայմաններ է ստեղծում հանցանք կատարած անձի համար[1]:

Քննարկման է ենթակա այն հարցը, թե սանկցիայի որ մասը պետք է չափանիշ հանդիսանա նոր օրենքն ավելի մեղմ համարելու համար՝ նվազագու՞յն, թե՞ առավելագույն: Կարծում ենք, որ վերջին տեսակետն ավելի ճիշտ է, քանի որ որոշ դեպքերում դատարանը կարող է նշանակել սանկցիայի նվազագույն սահմանից ցածր պատիժ, այսինքն՝ կիրառել սանկցիայի նվազագույն չափ կամ նույնիսկ նշանակել ավելի մեղմ պատիժ, քան նախատեսված է օրենքով: Սակայն ոչ մի դեպքում դատարանը չի կարող նշանակել ավելի խիստ պատիժ, քան նախատեսված է օրենքով:

ՀՀ նոր քրեական օրենսգիրքն ունի հետադարձ ուժ, քանի որ հիմնականում բարելավում է հանցանք կատարած անձի վիճակը, մասնավորապես՝ նոր քր. օր.-ն ընդլայնում է այն պատժատեսակների ցանկը, որոնց դեպքում հնարավոր է պատիժը պայմանականորեն չկիրառել: Համաձայն նախկին քրեական օրենքի՝ պայմանական դատապարտությունը վերացվում է փորձաշրջանի ընթացքում, նոր՝ յուրաքանչյուր տեսակի հանցանք կատարելու դեպքում: Սակայն նոր օրենսգրքով դատապարտյալի կողմից նոր անզգույշ կամ ոչ մեծ ծանրության դիտավորյալ հանցանք կատարելու դեպքում պատիժը պայմանականորեն չկիրառելու վերացման հարցը լուծում է դատարանը, այսինքն՝ տվյալ դեպքում պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելը պարտադիր չէ:

Սակայն նոր քր. օր.-ը նաև որոշակի առումով խստացնում է պատիժը պայմանականորեն չկիրառելու պայմանները: Եվ այս մասով քրեական օրենսգիրքը չպետք է ունենա հետադարձ ուժ:

Ամփոփելով վերոգրյալը՝ հանգեցինք հետևության, որ քրեական օրենսգրքի հետադարձ ուժը համապատասխանում է և՛ մարդասիրության, և՛ արդարության սկզբունքներին: Ուստի յուրաքանչյուր անգամ քրեական օրենքին հետադարձ ուժ տալու ընթացքում անձի իրավունքների հնարավոր խախտումները բացառելու համար անհրաժեշտ է անշեղորեն պահպանել քրեական օրենքի հետադարձ ուժի կանոնները, որոնք առկա են ոչ միայն սահմանադրահիրավական կարգավորումներում, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում և ՀՀ քրեական օրենսգրքում, այլև ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումներում:

[1] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թվականի դեկտեմբերի 5-ի որոշումը ԵԿԴ/0030/01/12 գործի վերաբերյալ, 17-րդ կետ:

ПРАВОВОЕ УРЕГУЛИРОВАНИЕ ОБРАТНОЙ СИЛЫ УГОЛОВНОГО ЗАКОНА УГОЛОВНЫМИ ЗАКОНОДАТЕЛЬСТВАМИ РА И РФ

Арам Айвазян
Соискатель кафедры уголовного права и процесса Российско-Армянского (Славянского) университета

В статье представлены конституционные и уголовно-правовые нормы РА и РФ, касающиеся действия уголовного закона во времени, обратной силы уголовного закона, их трактовка и анализ, а также сопоставление динамики развития этих норм. Разъяснено понятие закона, улучшающего положение лица, и его возможные проявления. Представлены также разные мнения и позиции ученых по данной тематике. Дана характеристика видов обратной силы уголовного закона. В рамках темы затронут также вопрос позиции Кассационного суда РА.

LEGAL REGULATION OF THE RETROACTIVE FORCE OF THE CRIMINAL LAW BY THE RA AND RF CRIMINAL LEGISLATIONS

Aram Ayvazyan
An applicant of the Chair Criminal Law and Procedure of the Russian-Armenian (Slavonic) University

The RA and RF constitutional and criminal-legal norms related to the action of the criminal law during the time, as well as the retroactive force of the criminal law, their comments and analyses, as well as the comparison of the dynamics of the development of these norms have been presented in the article. The notion of the law improving the state of the person and its possible manifestations have been clarified. Different scientific opinions and approaches on that field of study are also presented. The characteristics of the types of the retroactive force has been given in the article. The issues of the position of the RA Court of Cassation have also been touched upon within the framework of the theme.

Բանալի բառեր - *հետադարձ ուժ, օրենքի գործողություն, պատասխանատվությունը խստացնող և մեղմացնող, արարքի հանցավորություն, վիճակի վատթարացում, ճանաչվել մեղավոր, պատիժ:*
Keywords: *retroactive force, law action, aggravating and mitigating responsibility, criminal acts, the worsening of the state, to recognize guilty, penalty.*
Ключевые слова: *обратная сила, действие закона, ужесточающие и смягчающие ответственность, преступность деяния, ухудшение положения, быть признанным виновным, наказание.*